փախաս կը մղուին : Մորաւեան եղբարք, որոնց կրօնքը նախ Մորաւիա սկսելուն համար իրենք ալ Մորաւեանք կ'ըսուին. ասոնք խումբ խումբ կը բաժնուին իրենց տարիքին, աստիճանին, սեռին համեմատ. որով չկարգուած մարդիկ զատ խումբ կը կազմեն և առանձին աղօթք կ'ընեն, կարգուածները զատ, այրիները զատ. նոյնպէս երիտասարդները, օրիորդներն և տղաքն ալ առանձին առանձին խումբ կը կազմեն, որոնք մէջերնին գլխաւոր մը կ'ընտրեն և ստէպ ալ ժողովքներ կ'ընեն : Ասոնք ալ պաշտաման կողմանէ Մեթոտիստներուն շատ նման են. բայց մասնաւոր վախճան ալ ունին տղաքը կրթելու և ողորմութիւն տալու. ասոնց հիմնադիր եղած է Զինծենտորֆ անունով Հալլէյցի կոմս մը 1700ին սկիզբները : Իսկ Սկովտիա տարածուած աղանդը Երիցական կ'ըսուի, որոնք քահանայական և եպիսկոպոսական աստիճան չեն ընդունիր, այլ իրենց քահանայները ժողովուրդը կ'ընտրէ : Կան ուրիշ խել մը աղանդներ ալ որ իրարու հետ շատ նմանութիւն ունին և բազմաթիւ ալ չըլլալնուն համար զանց կ'առնենք յիշատակելը :

Անգղիայ՝ չորս գլխաւոր նորաղանդներու արքեպիսկոպոս և քսանըութը եպիսկոպոս, հասարակաց կամ նուիրակաց ատեանը մտնելու իրաւունք ունին. ու ինն ալ ուղղափառ արքեպիսկոպոս : Նորաղանդից կամ Անգղիական եկեղեցւոյն գլխաւոր արքեպիսկոպոսներն են Քէնթըրպըրիի, Եորքի, Արմակի ու Տըպլինի եպիսկոպոսները. ասոնցմէ առաջինը բովանդակ Անգղիոյ եպիսկոպոսաց նախագահն ու մետրապոլիտն է. Եորքինը միայն Անգղիոյ նախագահ. Արմակինը բովանդակ Իռլանտիոյ. Իսկ ուղղափառաց նախագահն ու մետրապոլիտն է Ուեստմինիստրի ծիրանաւոր արքեպիսկոպոսը :

Աս համառօտ տեղեկութիւնները տալէնէս վերջը, յաջորդ հատուածով ալ կը խօսինք Անգղիացւոց մատենագրութեան և հիմակուան ուսումնական վիճակին վրայ :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ.

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Բորենի [1] :

ՇԱՏ զարմանալի, և գրեթէ անհաւատալի կուգայ մարդուս՝ բորենիին վրայ երևցած բոլորովին իրարու ներհակ յատկութիւնները. որովհետև ամենադժուարին բան է որ անանկ չափաւոր մեծութեամբ մարմնոյն հետ՝ այնպիսի չափէ դուրս կատաղութիւն մը և ուժ ունենայ աս կենդանին. բայց այնչափ սարսափելի պատմութիւններ դիմացնիս լեցուն են աս գազանիս վրայօք, որ դիւրաւ կը հաւանինք ու չենք ալ տարակուսիր :

Բորենին շատ յատկութիւններ ունի որ գայլին կը նմանին, հասակն ու գլխուն ձևը նոյն է, ու անոր պէս կատաղի մսակեր է. անոր համար շատերը զանիկայ գայլի ու աղուէսու մէջ կը դնեն. գոյնը աղտոտ ճերմակ կամ մոխրագոյն է. ցռուկը մեծ և տափակ. կռնըկին վրայի մազը խոզանաձև երկնցած է. առջևի ոտուըները աւելի երկայն են ու ետևինները կարճ. պոչը պզտիկ ու կախուած. ոտուըներն ալ չորս չորս մատ ունին, բայց կարճ, հաստ ու զօրաւոր ըղունկներով. ասոնցմով է որ գետինը կը փորէ : Լեզուն խորտուբորտ է. աչուըները մեծ ու սև սև կը փայլին, ու ցորեկուան պէս գիշերն ալ կը տեսնեն. ծամելիքն ալ զօրաւոր ու սուր ակռաներով ամրացած է : Փախչելու կամ վազելու համար ոտքի վրայ որ ելլէ՝ ձախ ոտքին կաղութիւնը կը տեսնուի :

Բորենին միայն Ասիոյ ու Ափրիկէի մէջ կը գտնուի, ու անանկ կատաղի բնաւորութիւն ունի՝ որ ինչուան հիմա չեն կրցած ընտանեցընել. անոր համար ալ վայրենի կեանք մը կ'անցընէ, ու լերան ծակեր և կամ ժայռեր կը բնակի : Աս պատճառաւ է որ բորենիին սովորութեանցը վրայ մանրամասն տեղեկու-

[1] Գղ. Hyéne. Տճ. Զըրթլան :



Բորենի :

թիւն չունինք ։ Բնաւորութիւնը վատ, կատաղի ու անգութ է. աչուըները կրակ կը ցատքեցընեն. կատաղութենէն գլուխը ցած կը բռնէ ու մազերը միշտ վեր տնկուած են, բայց միանգամայն վախկոտ ալ է ։ Կերակուրը կենդանեաց միս է. բայց որսէն աւելի ապականեալ մարմին կը սիրէ. գիշեր ատեն գերեզմանատուններու մէջ կը մտնէ, ու տապանաքարերը թաւալելով կամ գերեզմանին տակէն լաւ մը փորելով դիակները կը հանէ կ'ուտէ ։ Այնչափ որկրամոլ է աս գազանը՝ որ կարծեն թէ կերածը փոխելու կարողութիւն ունի, որ նորէն կարենայ բզքտել և ուտել ։ Անդադար բնակութիւն եղած տեղեր կը պտըտի, ու Պիւֆֆոն կ'ըսէ թէ ասոր ոռնալուն ձայնը՝ փսխելու մօտ եղող մարդու մը խորլին հեծկլտանացը կը նմանի ։

Հին ատեն աս կենդանւոյս վրայ շատ առասպելներ կը պատմուէին. ինչպէս նաև կ'ըսէին թէ երկսեռ է. նոյն բանը ինչուան Պլինիոս ու Ելիանոս ալ կ'ըսեն. մանաւանդ Պլինիոս կ'աւելցընէ ալ թէ բորենին տարուէ տարի սեռը կը փոխէ, տարի մը արու՝ տարի մը էգ կ'ըլլայ. բայց այս մատենագիրները չեն հաստատեր ըսածնին ։ Այս բանս հիմա վէճ չվերցըներ. որովհետև արուին և իգին իրարմէ ունեցած տարբերութիւնները յայտնի կը տեսնուի ։ Դարձեալ բորենիին համար կ'ըսէին թէ հովիւները իրեն կանչելու ու զանոնք գիշատելու համար՝ ամենևին մարդու ձայն կը հանէ ։ Մոգերը մեծ պատիւ կու տային բորենիին՝ կարծելով թէ զմարդիկ կախարդելու մոգական կարողութիւն ունի. ինչպէս շուները կախարդելուն համար կ'ըսուէր թէ լեզունին բռնելու կարողութիւն ունի ։ Աս պատճառաւս արաբացիք բորենի մը որ կը սպաննեն՝ մէկէն գլուխը կը թաղեն, որպէս զի չըլլայ թէ մէկը մոգութեան համար գործածէ, ինչպէս որ հին ատեն թեսսաղացի վհուկները կը գործածէին ։ Հռովմայեցիք աս կենդանիս Գորդիանոս Գ ին ատեն սկսան տեսարաններու մէջ մտցընել. ու անանկ յաճախեց աս սովորութիւնը՝ որ Քրիստոսի 247 տարւոյն Փիլիպպոս կայսեր տուած խաղերուն մէջ՝ տասը բորենի կային ։ Բայց աս հոս ճանչցած բորենին միայն մէկ տեսակն է որ Երիզաւոր Բորենի կ'ըսուի ։ Աս տեսակին գոյնը սևագոյն գորշ է, ու մորթին վրայ երիզի կամ ժապաւէնի ձևով մթագոյն, անկանոն ու իրարմէ հեռու գծեր կան. ականջները լերկ ու սևագոյն, չափաւորապէս ալ երկայն ու լայն են. պոչն ալ նոյնպէս երկայն է ։ Աս տեսակը կ'ը-

սուի թէ կովերու և ոչխարներու շատ ֆնաս կը հասցընէ. բայց երբոր ուտելու ամենևին ուրիշ բան մը չգտնէ՝ ան ատեն բոյսերու արմատներ ու արմատենի փափուկ ընձիւղները կ'ուտէ։ Այս բնակութեան տեղերն են Բ.սիոյ ու Բ. փրիկէի հիւսիսային կողմերը, Կովկասու լեռները, Բ.լթայի գօտիները, Բ. սիոյ Տաճկաստանը, Բ.սորիք, Պարսկաստան, Պերպերիստան, Ամենեկալիա ու հնտեղի կողմերը ինչուան Խարէյուսոյ գլուխը։

Այրիզամորթ բորենիէն զատ ուրիշ տեսակ բորենի մ'ալ կայ որ Խայտաբղէտ կ'ըսուի. աս տեսակը սաստիկ կատաղի է, ու հարաւային Բ.փրիկէ շատ կը գտուի. մեռելներու դիակներն ու փարախներու մէջ գտուած կենդանիները ուտելէն զոհ ելլելով՝ ուրիշ կենդանիներու վրայ կը յարձակի, ու ցուցկովը ամէն հնարք կ'ընէ որ զանոնք փախցընէ որպէս զի ետևնէն վազէ. ուրուվհետև ան ատեն նոր ուժ մը կ'առնէ. ցորեկ ատեն քիչ անգամ դուրս կ'ելլէ. ընդհանրապէս դուրս ելլելու ատենը օրուան մթննալուն ու գիշերն է, զորն որ միշտ կը ծանուցանէ իր ահաւոր ոռնալուն ձայնը։ Բ.տեն մը ասոնք սովորութիւն ըրած էին ամէն գիշեր Խարէյուսոյ գլուխը յարձրկելու. ու ինչուան հիմա ալ երբեմն կը մօտենան սաստիկ կաղկանձելով։ Հոնտեղի բնակիչները շատ հնարքներ կը բանեցընեն աս կենդանին ջնջելու համար, որուն իրենք Գայլավագը կ'ըսեն. բայց անիկայ իր կասկածոտութեամբը ու խորամանկութեամբը գրեթէ միշտ կ'ազատի։ Բա Ֆրաստան ալ շատ յաճախ են աս խայտաբղէտ բորենիները, ու անանկ յանդուգն՝ որ գեղերու վրայ կ'երթան, ու բռնութեամբ կամ խարդախութեամբ բնակութենց մէջ կը մտնեն, ու երբեմն ինչուան տղաք ալ կը յափշտակեն. աս կերպով շատ ջարդ կ'ընեն, և մարդու միսը շատ սիրելնուն՝ հորթերու մէջ որ ըլլան՝ հորթերը կը ձգեն, կ'երթան տղաքները կը յափշտակեն. և շատ անգամ առանց իմացնելու ալ. ասոնց մորթին գոյնը տժգոյն դեղին է սևի հետ խառնուած, ու վրան ալ բիծեր կան քիչ մը մոխրագոյն։

Գանք հիմա Գեղմնաւոր բորենիին որ Հարաւային Բ.փրիկէի մէջ կը գտնուի. բայց ասիկայ խայտաբղէտ բորենիէն շատ աւելի սակաւաւոր է, ու գրեթէ միշտ ծովափնեայ տեղուանք կը տեսնուի. կերակուրը դիակ է և ան ապակաեալ կենդանւոյ մարմիններ որ ծովը ցամաքին վրայ կը նետէ. բայց անօթութենէ ատեն ինքն ալ մէկալ տեսակներուն պէս ոչխարներ ու կովեր կը յափշտակէ. խորամանկութենէ կողմանէ ալ անոնցմէ վար չմնար. ու առտուընէ ինչուան իրիկուն լերներու մէջ պահուըտած կը կենայ. մարմնոյն գոյնը գորշ է, ու բարձրութիւնը երկու ոտք ու չորս բթաչափի կը հասնի, իսկ երկայնութիւնը չորս ոտք ու չորս բթաչափ է։

Հողերու երրորդական կարգերու՝ մանաւանդ ոսկրով լեցուն քարայրներու մէջ շատ բրածոյ բորենիներ կը գտուին, ինչուան Իտալիոյ մէջ. ան ալ մանաւորապէս Ալտարնուի մէջ։

ՀԱՄԱՌՕՏ ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ [1]

ԺԳ.

ԴԱՍ ՉՈՐՐՈՐԴ

Երրորդական ժայռք։

Այրրորդական ըսուած դասին մէջ կարծր ժայռեր քիչ կը գտուին, ու գըլխաւորապէս կոպէ, կաւէ ու քիչ շատ կրային մարնայէ կը բաղկանան։

Այրրորդական դասին կոպիճը շատ անգամ մեծամեծ ու ամենակարծր զանգուածներ ձևացած կ'ըլլայ, ու շատ բանի կուգայ. երբեմն ալ փիրուն ու բոլորովին աւազ դարձած կ'ըլլայ։

Այրրորդական կաւն ու մարնան վրայի վրայ խաւեր կը ձևանան, թէպէտ զուս կաւի կոյտեր ալ շատ կը գտուին. բայ:

[1] Յհաս. Երես. 13։